

22556

19 JAN 2010

105 7.70

FEB 2007

ՀԱՅ ՅԵՂԱՓ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Աշխատանք»-ի № 10

Պ. ԻԻՇԿԵՆԻԻՉ

ԱՇԽԱՏԱԻՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ռուսերենից փոխադրեց
Ռ Ռ Ի Տ Օ Ն

ԹԻՖԼԻՍ

Տպարան «Աշխատանք»

1918

331

3m-84

424

22556

9.07.201

331

300-84

USPH-4-100 E
1964 P.

Ինստիտուցիոնալի առաջին կանոնադրու-
թեան նախաբանը*)

Ի նկատի ունենալով՝

որ բանւորների ազատագրութիւնը
պիտի լինի հէնց իրենց՝ բանւորների
դործ, որ ազատութեան համար կրու-
ւելով՝ բանւորները պէտք է ձգտեն ոչ
թէ նոր արտօնութիւնների ստեղծե-
լու, այլ բոլորի համար հաւասար ի-
րաւունքներ ու պարտականութիւններ
հաստատելու և դասակարգային ամեն
մի տիրապետութիւն վերացնելու,

որ բանւորների տնտեսական հն-
թարկումը արդիւնադործական միջոց-
ների տիրոջը հանդիսանում է ստրկու-
թեան բոլոր տեսակների՝ աղքատու-
թեան, բթամտութեան և քաղաքական
կախման աղբիւր,

որ այդ պատճառով բանւոր դասու-

*) Ընդունելով այս դոկումենտի
պատմական մեծ նշանակութիւնը՝ կա-
րորը համարեցինք այդ իբրև նախա-
բան կցել Պ. Իւշկեւիչի գրքոյկին: Ծ.Թ.

5047

6679



221-94

կարգի անտեսական ազատագրումը մի գերազոյն նպատակ է, որին ամեն մի քաղաքական շարժում պէտք է ստորադրել իբրև միջոց,

որ բանւորների բոլոր ջանքերն այդ նպատակին հասնելու ցարդ ապարդիւն են մնացել թէ՛ այն պատճառով, որ ամեն մի երկրում աշխատանքի տարբեր ճիւղերի բանւորների մէջ համերաշխութիւն չի եղել և թէ՛ այն պատճառով, որ տարբեր երկիրների բանւորների մէջ բացակայել է եղբայրական կապը,

որ բանւորների ազատագրութիւնը միայն տեղական կամ ազգային մի խնդիր չէ, այլ ընդհակառակն, շօշափում է բոլոր քաղաքակիրթ ազգերի շահերը. և նրան հասնել կարելի է բոլոր ազգերի տեսական և գործնական փոխադարձ աջակցութեամբ,

որ Եւրոպայի ամենաարդիւնաբերական երկիրներում ներկայումս վերանորոգւող շարժումը նոր յոյսեր տալով հանդերձ՝ հանդիսաւորապէս զգուշացնում է հին սխալները կրկնելուց և հարկադրում է ձգտելու բոլոր դեռևս

իրարից անշատ ջանքերի միացման, —
 ահա այս բոլորն ի նկատի ունենալով հիմնւում է Բանւորների Միջազգային Ընկերութիւնը:

Բանւորների Միջազգային Ընկերութիւնը յայտարարում է, որ նրան յարող բոլոր միութիւններն ու առանձին անհատները իբրև հիմք իրենց վերաբերմունքի դէպի բոլոր մարդիկ, անկախ սրանց ցեղից, կրօնից և ազգութիւնից, ընդունում են նւարտութիւնը, արդարութիւնը և բարոյականութիւնը. չպէ՛ս է լինին պարսկանութիւններ առանց իրաւունքների և իրաւունքների՝ առանց պարսկանութիւնների:

Պ. ԻՆՇԿԵՒԻԶ

ՁԵՒԱՏԱՆՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳՆՅԻՆ ՄԻՈՒ-
ԹԻՒՆՈՒ

Բոլոր մարդիկ եղբայրներ են, բո-
լոր մարդիկ հանրամարդկային միեւնոյն
ընտանիքի գաւակներն են,—այսպէս
էին ասում բոլոր ազգերի իմաստուն-
ները բոլոր դարերում: Այս էր քարո-
ղում և քրիստոնէութիւնը: Մահայն
ոչ իմաստունների խօսքերը և ոչ
էլ քրիստոնէութեան ուսմունքը չկա-
րողացան եղբայրութիւն ասալ բերել
երկրի վրայ:

Ներկայումս էլ, ինչպէս և հին ժա-
մանակներում, մարդկութիւնը բաժան-
ւած է իրար նկատմամբ ոչ բարեա-
ցակամ ազգութիւնների, որոնք մի
թեթև առիթից անգամ պատրաստ են
իրար վրայ յարձակելու: Չկայ մի-
ջազգային եղբայրութիւն, չկայ եղբայ-
րութիւն և առանձին ազգերի ներքին
կեանքում: Այստեղ էլ խտրութիւն ու
կռիւ, այստեղ էլ բաժանում հարուստ-
ների ու աղքատների, աղնւականի ու

սամիկի, այստեղ էլ մարդկանց մի
մասը համարում է «վերին արտի ցո-
րեն», միւս մասը՝ «ներքին արտի
ցորեն», այստեղ էլ մի մասի արիւնը
միւսի արիւնից «աւելի կարմիր» է
համարում:

Թէև քրիստոնէութիւնը սկզբում
կուում էր հասարակական այդ չարի-
քի դէմ և ասում էր, որ ինքը խտրու-
թիւն չի դնում հելլենների (յոյների)
և հրէաների մէջ, բայց յետագայում
նա հաշտեց տիրող կարգերի հետ ու
ընդունեց և անհաւասարութիւն և իրար
դէմ մրցող ու թշնամական վերաբեր-
մունք ունեցող ազգութիւններ:

Քրիստոնէութեան նախկին խնդիրն
այժմ իր վրայ է վերցրել տոգիալիզմը:
Նա նպատակ ունի վերացնել մարդ-
կանց մէջ տիրող անհաւասարութիւնը
և համաձայնութիւն ու խաղաղութիւն
հաստատել բոլոր ազգերի մէջ: Սոցիա-
լիզմն ուսուցանում է, որ այդ երկուսը
տարբեր բաներ չեն, այլ մի, և որ
միայն այն ժամանակ կըլայձուցի տար-
բեր ազգութիւններից մի համերաշխ

ընտանիք կազմել, երբ կը հաստատուի սոցիալիստական հասարակակարգը:

Միջազգայնութիւնը (ինտերնացիոնալիզմը) սոցիալիզմի գլխաւոր պատւիրաններէից միինն է:

Արդի սոցիալիզմը սակայն բոլորովին այլ ճանապարհ է ընտրում այդ խնդրի լուծման համար, քան այդ անում էր քրիստոնէութիւնը: Քրիստոնէութիւնն իր եղբայրութեան ու սիրոյ քարոզներով դիմում էր բոլոր մարդկանց, առանց հասարակական դիրքի խարութեան: Նրան թւում էր, թէ՛ և պալատարնակները և՛ խրճիթարնակները և՛ իրենց ծագումով հպարտները և՛ ամենքին անյայտ մնացած ազգատները սիրոյ աւետիքը նոյն կերպ կընդունեն: Մենք այժմ ենք իմանում, որ քրիստոնէութիւնը սխալւել է— սիրոյ ուսմունքը ընդունել են խօսքով, բայց իրօք ամեն բան մնացել է նախկինը:

Այդ շատ լաւ նկատել է սոցիալիզմը և որոշել է իր հերթին չկրկնել նոյն սխալը: Նա շատ լաւ գիտէ, որ կուշտ

փորը և ուսմունքը, այն էլ եղբայրութեան ուսմունքը, ըրարից սար ու ձոր հեռու են: Նա որոշել է խօսել լսողների հետ, աշխատաւորներին և քաղցածների հետ, հէնց զրա մէջ էլ կայանում է արդի սոցիալիզմի առանձնաշատուկ կողմը, նա իւր աւետարանը բերում է ոչ բոլոր մարդկանց, այլ աշխատաւոր զանգւածներին և, անօջիւն հերթին, վարձու բանւորներին— պրոլետարներին: Սակայն նա համոզւած է, նա գիտէ, որ երբ յաղթի և զայ սոցիալիստական հասարակակարգը, այն ժամանակ ոչ-աշխատաւորներ գոյութիւն չեն ունենալ, և եղբայրութեան նոր ստետարանը կընդունուի բոլոր մարդկանց կողմից: Սրանից եօթնասուն տարի առաջ (1848 թ.) լոյս տեսաւ երկու երիտասարդ սոցիալիստների՝ Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստ» խորագիրը կրող գրքոյկը: Որքան և փոքրածաւալ, բայց մարդկային ձեռքով գրւած ամենագնահատելի գրքերից միինն է: Դրանից է սկիզբ առել ներ-

կայ սոցիալիստական շարժումը: Գրեթէ այն ամենը, ինչ ուսուցանում են սոցիալիստները, արգէն կայ այդ գրքում, նրա մէջ նկարագրուում է հասարակական անհաւասարութիւնն ու նրա պատճառները. նկարագրուում է, թէ ինչպէս ներկայ կապիտալիստական հասարակակարգի մէջ իրար հակադրուում են երկու գլխաւոր դասակարգեր — բուրժուազիան և պրոլետարիատը: Այնտեղ ասուում է, թէ ինչպէս պրոլետարիատը բուրժուազիայի տիրապետութիւնից ազատելու համար պէտք է ոչնչացնի արգիւնաբերութեան գործիքների մասնաւոր սեփականութիւնը ու հաստատի սոցիալիզմը:

Այդտեղ ցոյց է տրուում, թէ այդ նպատակին հասնելու համար ինչպէս պէտք է կռի պրոլետարիատը. այդ գրքում ապացուցուում է, որ բոլոր երկիրների բանւորների շահերը մի են, և որ նրանք ունին մի ընդհանուր թշնամի, այսինքն ունեւոր դասակարգերը: Եւ գիրքը վերջանում է այն ժամանակից յայտնի դարձած հետեւ-

եալ խօսքով. «Պրոլետարներ բոլոր երկիրների, միացէք»:

Պրոլետարներ բոլոր երկիրների, միացէք—այս կոչը դէպի Միջազգայինը, դէպի աշխատաւորի Միջազգային Միութիւնը հնչեց 70 տարի առաջ և այն ժամանակից միշտ էլ ոգևորել է սոցիալիստներին:

Առաջին շրջանում բանւորական շարժումը տարբեր երկիրներում դեռ թոյլ էր: Սակայն երբ «Կոմմունիստական մանիֆեստի» ելեան գալուց մօտ 15 տարի յետոյ նա որոշ չափով ոյժ ստացաւ եւրոպական մի քանի գլխաւոր երկիրներում, ինչպէս են՝ Ֆրանսիա, Գերմանիա, Անգլիա և այլք, նրա առաջին գործերից մէկը եղաւ Միջազգային Բանւորական Միութիւն ստեղծելը:

1862 թուին Լոնդոնում կազմեց համաշխարհային ժողով. այդ ժողովին եկան Ֆրանսիական բանւորները, որոնք համաձայնութեան եկան անգլիացի իրենց ընկերների հետ քննութեան ամենելու ընդհանուր կարիքնե-

ըր: Սրանց յարեցին գերմանացի, լեհացի և ուրիշ բանուորներ էլ: տեղի ունեցան ուրիշ ժողովներ էլ, որոնց արդիւնքը եղաւ այն, որ 1864 թ. հիմնւեց այնքան յայտնի «Բանուորական Միջազգային Ընկերութիւնը», կամ, ինչպէս յաճախ ասում են, առաջին Միջազգայինը: Ընկերութեան գլուխ կանգնած էր Մարքսը, որ և գրեց ընկերութեան կանոններն ու ծրագիրը: Այդ ծրագրի մէջ ցոյց է տրւում, որ բանուորն իր լաւագոյն ապագային հասնելու համար մղած պայքարի մէջ յոյսը պէտք է դնի իր իսկ ուժերի վրայ: Բանուորների ազատագրումը պէտք է լինի հէնց իրենց՝ բանուորների ձեռքով: Բանուորական շարժման հետամտած նպատակն է՝ վերացնել որոշ դասակարգերի տիրապետութիւնը միւսների վրայ: Այնուհետեւ ծրագրում ասում էր, որ բանուորական շարժումը հանդիպել է անյաջողութեան այն պատճառով, որ տարբեր երկիրների և արդիւնաբերութեան տարբեր ճիւղերի բանուոր-

ները զուրկ են եղել եղբայրական միութեան ոգուց: Աշխատանքի լիակատար ազատագրումն այնպիսի խնդիր է, որը չի կարող լուծուիմ ստանալ միայն մի երկրում, այդ ազատագրումը տեղի պիտի ունենայ այն բոլոր երկիրներում, որտեղ գոյութիւն ունին կեանքի ներկայ պայմանները: Ահա այդ նպատակին հասնելու և տարբեր երկիրների բանուորների համար մի ընդհանուր գործելակերպ մշակելու նպատակով է, որ գումարւում է Բանուորական Միջազգային Միութիւնը:

Միջազգայինի հիմնւելու հետ առաջին անգամ իրականացաւ «Կոմմունիստական մանիֆեստի կոչը ուղղւած բանուորներին»: Այդ օրւանից սկսեցին տեղի ունենալ տարբեր երկիրների ներկայացուցիչների խորհրդաժողովներ, որտեղ քննութեան էին առնւում բանուորական շարժման զլխաւոր խնդիրները: Այդ խնդիրները երբեմն լինում էին մասնաւոր հարցեր, ինչպէս օրինակ՝ գործազրկութեան, սպառու-

դական ընկերութիւններէ մասին, երբեքն էլ աւելի ընդհանուր հարցեր էին քննուում. օրինակ՝ պատերազմի վերացման և դէպի սոցիալիզմը տանող ճանապարհների մասին: Միջազգայինն էլ օգնութիւն էր ցոյց տալիս բանւորական գործակցութեան տարբեր երկիրներում, բայց նրա վլխաւոր երախտիքն այն էր, որ նա դաստիարակում էր աշխատաւոր զանգւածներին: Նա ցոյց էր տալիս, որ ջնայած պետական, կրօնական և ազգային տարբերութիւններին, բոլոր երկիրների պրոլետարների շահերն ընդհանուր են:

Պրոլետարները միայն այն ժամանակ կարող են բառի բուն իմաստով մարզիկ և ոչ կիսաստրուկ զամնալ, երբ կապիտալիստական կարգը կը փոխեն սոցիալիստականի: Այս փոփոխութիւնը պիտի կատարել բոլոր երկիրներում և ոչ թէ որևէ առանձին երկրում, որովհետև այժմ բոլոր երկիրները ամուր կապւած են իրար հետ առևարական յարաբերութիւննե-

րով և իրարից կախումն ունին:

Եւ եթէ իրար հետ կապւած են մէկ մէկու դէմ մրցող պետութիւնները, ոպա աւելի սերտ կապւած են աշխատաւորները, որոնք մրցութեան տեղիք չունին և որոնք ունին մի ընդհանուր նպատակ:

Իր ուժերը սոցիալիզմի ընդհանուր նպատակի համար միացնելու ոգով էլ ինտերնացիոնալը դաստիարակում էր բանւորներին: Բայց նա չյարատեց. իր գոյութիւնը պահպանեց մօտ տասը տարի:

Միջազգային Միութեան հիմնադրութիւնից յետոյ շատ շուտով նրա մէջ ծագեցին անհամաձայնութիւններ ու պատահուումներ, որոնք և կործանման հասցրին ամբողջ գործը:

Այդ պատահուումները բացատրւում են նախ՝ հէնց իրեն, բանւորական շարժման անփորձութեամբ և ապա՝ նրանով, որ բանւորական շարժումը բոլոր երկիրներում նոյն կերպ չէր հառունացած:

Չպէտք է մոռանալ, որ այն ժամա-

նակ, այսինքն սրանից յիսուն տարի առաջ, նոյնիսկ առաջաւոր երկիրնե-
րում, բանւորութիւնը նոր էր. անուժ
իր առաջին քայլերը:

Բանւորների մեծ գանգաւածները դեռ
ևս լաւ չէին գիտակցում իրենց շա-
հերը: Սոցիալիզմի ուսմունքը շատե-
րին տակաւին մնում էր անհասկանա-
լի, շատերին վախեցնում էր, և մի-
այն ամենագիտակից պրոլետարներն
էին, որ մտնում էին նրա գրօշակի
տակ: Եւ այդ կատարւում էր դեռ ևս
ամենակրթւած երկիրներում, ինչպէս
են՝ Անգլիա, Ֆրանսիա և Գերմանիա.
Իսկ յետամնաց երկիրներում, որտեղ
կապիտալիզմը քիչ էր զարգացած և
կեանքն ընթանում էր հին ձևով՝ բան-
ւորներն էլ աւելի պակաս էին պատ-
րաստւած, որպէսզի կարողանային
ճիշտ ըմբռնել իրենց դրութիւնը: Նը-
րանց մէջ հակում էր նկատուում բըռ-
նութեամբ և ապստամբութեամբ բար-
ւոքել իրենց կեանքը, նրանց մէջ ու-
ժեղ էին խռովարարական և անիշխա-
նական ձգտումները:

284


224-94 5549

501

Սոցիալիստական ուղղութեան (այս
ուղղութեան պարագլուխն էր Մարքս)
և անիշխանականութեան հոսանքի
(որի պարագլուխն էր Բակունին) մի-
ջև տեղի ունեցաւ մի կռիւ, որը առաջ
բերեց Ինտերնացիոնալի պատակտումը
և պատճառ դարձաւ նրա խորտակման:

Առաջին Ինտերնացիոնալը մեռաւ.
բայց սոցիալիստական—բանւորական
շարժումը չմեռաւ, այլ ընդհակառակն,
շարունակեց զարգանալ իւրաքանչիւր
երկրում առանձին և այս անգամ ա-
ւելի ուժեղ, քան առաջ:

Գրեթէ բոլոր առաջաւոր երկիրնե-
րում, մի տեղ շուտ, մի տեղ ուշ,
կազմեցին սոցիալիստական կուսակ-
ցութիւններ. այդ բոլոր կուսակցու-
թիւնների նպատակն էր վերացնել
մասնաւոր սեփականութիւնը: Այդ
բանին հասնելու միջոցը նրանք հա-
մարում են այն, որ պետութեան մէջ
քաղաքական իշխանութեան ղեկը լի-
նի բանւոր դասակարգի ձեռքին: Իրա
համար բոլորն աշխատում են բան-
ւորների մէջ սոցիալիզմի ուսմունքը



տարածել, կազմակերպել նրանց քաղաքական կուսակցութիւնների գրոշակի տակ, նրանցից կազմել արհեստակցական միութիւններ և կօօպերատիւ բնկերութիւններ:

Մի քանի երկիրներում սոցիալիստների գործն առաջ է գնում յաջող և արագ, նրանց մօտ գալիս են հազարաւոր և միլիոնաւոր բանւորներ, իսկ մի քանի երկիրներում էլ՝ ոչ այնքան յաջող և զանգագրայց բոլոր երկիրներում էլ բանւորական շարժումը կատարւում է, կասես, նոյն ձևով: Այդ շարժումները սակայն տեղի են ունենում առանձին առանձին, ամեն մէկն իր երկրում: Բանւորների պարագլուխները հանդիպում են իրար, մէկը միւսից սովորում է, բայց տարբեր կուսակցութիւնների միջև կապ չկայ, և այս այն ժամանակ, երբ բոլոր կուսակցութիւնները նոյն բանն են ուսուցանում, նոյն գործն են կատարում և ունին այս նշանաբանը. «Պրոլետարներ բոլոր երկիրների, միացէ՛ք»: Այսպէս անցնում է 15 տարի, որի

ընթացքում իւրաքանչիւր կազմակերպութիւն ուժեղ գործունէութիւն է ունենում իր տեղում. վերջապէս այդ աշխատանքը ապլիս է առատ պտուղ և այն ժամանակ աշխատաւորների պարագլուխները զգում են, որ անհրաժեշտ է բոլոր աշխատաւորների ուժերն ի մի հաւաքել:

1889 թւին Փարիզում կազմւում է երկրորդ Ինտերնացիոնալի առաջին համագումարը: Այս երկրորդ Ինտերնացիոնալն առաջին Ինտերնացիոնալի շարունակութիւնն է, կամ ինչպէս ասել է Փարիզի կոնգրեսում Վ. Լիբկնեխտը. «Ինտերնացիոնալը չի մեռել, նա ձևափոխել է բանւորական ուժեղ շարժման առանձին-առանձին երկիրների մէջ և շարունակում է ապրել նոյն շարժման մէջ, նա ապրում է և ձեր մէջ: Ներկայ համագումարը Բանւորների Միջազգային Միութեան հիմնումն է»:

Երկրորդ Ինտերնացիոնալն ասելի ուժեղ էր, քան առաջինը: «Միջազգային Բանւորական Միութեան»-ը մաս-

նակցութիւն ունէին միմիայն մի քանի ազգութիւններ, բայց երկրորդ Ինտերնացիոնալի համազումարին մասնակցում էին գրեթէ բոլոր ազգերի ներկայացուցիչները:

Ինտերնացիոնալի շուրջը խմբւած ազգութիւնների ոչ միայն թիւն էր մեծ, այլ և մեծ էր իւրաքանչիւր երկրի ներկայացուցիչների մէջ սոցիալիստների թիւը: Երկրորդ Ինտերնացիոնալն ուժեղ էր նաև այլ տեսակէտից. նրա ժողովներին մասնակցող բանւորներն իրենց հայեացքներով աւելի քիչ էին տարբերում իրարից, քան առաջին Ինտերնացիոնալի անդամները. անիշխանականներին շուտով զրկեցին համազումարներին մասնակցելու իրաւունքից. նրանք արդէն իսկ այնպիսի ոյժ չէին ներկայացնում, ինչպէս առաջ: Յետափոյց երկիրները կամաց կամաց հասան յառաջադէմ երկիրներին: Բոլոր երկիրներում զարգացաւ կապիտալիզմը. սրա հետևանքով առաջացաւ գործարանական պրոլետարիատը, որն իր զանգւածներով

համարեա ամենուրէք յարում էր սոցիալիստական ուսմունքին:

Երկրորդ Ինտերնացիոնալը սոցիալիստական էր. այստեղ էլ կային տարածայնութիւններ ու վէճեր, բայց այժմ արդէն վիճում էին այլ խնդիրների մասին, քան որոնց պատճառով իրարից անջատեցին Մարքսի և Բակունինի հետեողները: Այստեղ վիճում էին այն մասին, թէ կարո՞ղ է սոցիալիստը մտնել բուրժուական միլիտարութեան մէջ և եթէ այո՞, ապա ինչ պայմաններում. վիճում էին այն մասին, թէ կարի՞ք կլինի՞ անպայման յեղափոխութեամբ սոցիալիստական հասարակակարգ հաստատելու, թէ՞ նրան կարելի է հասնել կամաց-կամաց, առանց բռնութիւն գործ դնելու բուրժուալիստի վրայ. շատ էին վիճում նաև այն մասին, թէ ինչպէս պիտի կուռել միլիտարիզմի դէմ, ինչպէս պատերազմի առաջն առնել և այլն:

Երկրորդ Ինտերնացիոնալի համազումարներում ուրիշ շատ խնդիրներ էլ քննութեան էին առնւում, և

Նրա գոյութեան 25 տարեայ ընթացքում եղան շատ վճիռներ և որոշումներ:

Ամենայայտնի որոշումներից մէկն էր մայիսի 1-ին աշխատանքի տօն սահմանելը, մի բան, որ որոշել էր Փարիզեան առաջին համագումարը:

Մայիսի 1-ին բոլոր երկիրների բանւորները գործի չպիտի ձեւնարկէին, պէտք է ցոյցեր կազմակերպէին և պահանջէին ութամեայ բանւորական օր: Այս տօնի նպատակը պիտի լինէր հաստատուն պահել բոլոր Աշխատւորների Միջազգային Միութիւնը և նրանց ձգտումն ազգերի խաղաղութեան:

Մայիսի 1-ն Ինտերնացիոնալիզմի տօնն էր:

Երկրորդ Ինտերնացիոնալի սկզբնւորութիւնից մինչև հերոզական մեծ պատերազմն անցել է զրեթէ 25 տարի:

Այդ քատորդ դարի ընթացքում բոլոր ազգերը շատ յառաջադիմել են. ամենուրէք մեծապէս զարգացել է արդիւնաբերութիւնը և առևտուրը:

Շատ ուժեղ կերպով աճել է նաև սոցիալիստական շարժումը: Այնտեղ, որտեղ նա արդէն ստաջ գոյութիւն ունէր, այժմ սոցիալիստաշխատատուների թիւը մի քանի անգամ բազմապատկել է: Աւելացել են էլի նոր երկիրներ, (ինչպէս օրինակ՝ Ռուսաստանը, որտեղ 1889 թւին դեռ ևս չկար բանւորական շարժում) որոնք 1914 թւին արդէն ոչ նւազ թւով սոցիալիստներ ունէին:

Ինտերնացիոնալի համագումարները տարէցատարի բազմամարդ էին դառնում, իսկ սոցիալիստների ազգեցութիւնը պետական գործերի վրայ՝ առաջւոր երկիրներում՝ աւելի ու աւելի ուժեղ: Սոցիալիզմի շաջողութիւնները շատ անհանգստացնում էին ղեկավար դասակարգերին, որոնք հասկանում էին, որ եթէ սոցիալիզմն առաջիկայում էլ նոյն ձևով աճի, ապա շուտով կը հասնի իրենց տիրապետութեան վախճանը:

Բուրժուազիան և նրան հաւատարիմ կառավարութիւններն ամեն կերպ աշխատում էին բանւորական շարժումը

թուլացնել՝ գործելով մերթ փառաքը-
 շանքով և մերթ սպառնալիքով: Մերթ
 անողորմ կերպով հայածում էին սո-
 ցիալիստներին, բայց, ինչպէս միշտ,
 հալածանքները միայն աւելի ու աւելի
 համախմբում էին հալածւածներին
 ընդհանուր թշնամու դէմ: Մերթ զա-
 նազան տեսակ զիջումներ էին անում
 բանւորներին—կրճատում էին բանու-
 րական օրը, ծերութեան և հիւանդու-
 թեան դէպքերի համար ապահովա-
 գրութիւն էին մտցնում և մտածում
 էին այսպիսով նրանց կտրել սոցիա-
 լիզմից. սակայն զիջումներն էլ չէին
 օգնում. բանւորները, հարկաւ, զիջում-
 ներն ընդունում էին ուրախութեամբ,
 բայց միևնույն ժամանակ նրանք շատ
 լաւ էին հասկանում, որ այդ զիջում-
 ներն արւում են ոչ թէ դէպի աշխա-
 տաւորն ունեցած բարի ցանկութիւնից
 կամ հողատարութիւնից, այլ սոցիա-
 լիզմից ունեցած վախից, և աւելի
 սերտ էին կապում սոցիալիզմի վար-
 դապետութեանը, որը նրանց խոստա-
 նում էր ապագայում լրիւ ազատու-

թիւն և ներկայում նրանց դրութիւնը
 բարելաւում էր:

Ղեկավար դասակարգերն ուրիշ փոր-
 ձի էլ չէին գիտեցին. նրանք աշխատում էին
 բանւորներին կտրել սոցիալիզմից,
 ուստի յայտարարում էին, որ սոցիա-
 լիստներն ինտերնացիոնալիստներ են
 և որ նրանք հայրենիքի թշնամի են,
 դաւաճան են: Բայց այս խաբեքայու-
 թեանն էլ չէին երթարկում բանւոր-
 ները, լաւ հասկանալով, որ իրենց ու-
 ժը հէնց ինտերնացիոնալիզմի, բոլոր
 աշխատաւորների միջազգային միութե-
 թեան մէջ է:

Այսպէս ամբանում էր սոցիալիս-
 տական շարժումը և այսպէս նրա
 դէմ իրենց մեքենայութիւններն էին
 անում բուրժուազիան և կառավա-
 րութիւնը, կրք բռնկեց 1914 թ.
 կռիւը:

Այժմ արդէն բոլոր երկիրների աշ-
 խատաւորութեան զգալի մասը հաս-
 կանում է, և երեւի շուտով նրա մե-
 ծամանութիւնը կը հասկանայ, որ
 ներկայ պատերազմը իւրաքանչիւր

խոշոր երկրի բուրժուազիայի սարքած խաղ է. նա այդ խաղն սկսել է նուաճողական նպատակներով, որպէսզի յաջողութեան դէպքում իր յաղթւած հարեանի հաշիւն կարողանայ, ինչպէս ասում են, «իրեն դղել»): այսինքն հարստանալ:

Աշխատաւոր ժողովրդին պատերազմը ոչինչ չէր բերում, բացի վաղժամ մահից, հաշմանդամութիւնից և քայքայումից և, եթէ նա ընդունեց պատերազմի կոչը և շատ երկիրներում սոցիալիստները սիրով գնացին կուելու, ապա նրանցից իւրաքանչիւրն իր երկրում այն էր մտածում, թէ իր հայրենիքը վտանգի մէջ է, որ յարձակուղի գերում չէ իր հայրենիքը, այլ պաշտպանուղի: Եւ անս, երեկւայ ինտերնացիոնալիստները փոխանակ ընդհանուր համաձայնութեան դարու, որ իւրաքանչիւրը հարկադրի խոր կառավարութեան յետ կենսւ պատերազմից, գնում է եղբայրը եղբոր դէմ:

Այսպիսով բուրժուազիան մի հար-

ւածով երկու ձեռնառու դործ է կատարում: Մի կողմից նա ամեն երկրում առայտ հունձ է անում շնորհիւ պատերազմի և դեռ ինկատի ունի աւելին հնձել թշնամուն յաղթելու դէպքում, իսկ միւս կողմից նա միանգամից արաւ այն, ինչ որ չէր կարողանում անել տասնեակ տարիների ընթացքում—գժտեցրեց իրար դէմ տարբեր երկիրները բանւորներին, խորտակեց հզօր ինտերնացիոնալը: Եւ չի կարելի չխոստովանել, որ երկու խընդիքն էլ յաջող լուծել է նա: Նախկին ընկերներն ու եղբայրներն այլևս չեն ուզում ճանաչել մէկ մէկու, չեն վրտաճում և առում են իրար: Ինտերնացիոնալը քայքայւեց, իւրաքանչիւր կողմը մեղադրում է միուսին. ֆրանսիացիները, անգլիացիները և բելգիացիներն ասում են, որ գերմանական և աստրիական սոցիալիստները դաւաճանել են Ինտերնացիոնալին և որ դաւաճանների հետ չի կարելի գործուհնալ: Գերմանացիներն ու աստրիացիները նրանց ատարկում

են, որ իրենք բնաւ դաւածաններ չեն, այլ պաշտպաններ իրենց հայրենիքի, որի դէմ գինւել են գրէթէ բոլոր երկիրները. իսկ հայրենիքի պաշտպանութիւնը վատ գործ չէ և ոչ էլ սոցիալիզմն է այդ արգելում: Այսպէս են առարկում մէկ մէկու տարրեր երկիրներէ սոցիալիստները: Բայց կուտոյ երկիրներէց իւրաքանչիւրում հէնց սկզբից էլ կար մի փոքրամասնութիւն, որը տեսնում էր, որ պատերազմը գէպի գերեզման է տանում Միջազգային Բանտորական Միութիւնը և սոսկալի խոչընդոտ է հանդիսանում սոցիալիզմին. նա առում էր, որ պատերազմի առաջը պիտի առնել բոլոր միջոցներով՝ պառլամենտներում հակառակ ձայն տալ պատերազմի համար զրամ յատկացնելուն, պատերազմի դէմ ընդհանուր ցոյցեր անել և այլն: Այսպէս մտածողների թիւը պատերազմի սկզբում շատ փոքր էր, բայց որքան երկարեց պատերազմը և նրա հետ աղքատութիւնը, մահն ու հիւանդութիւնը մեծ չափեր ընդունեցին, այն-

քան այս հոյեացքի կողմնակիցները շատացան:

Այսպիսով առաջւայ համերաշխ Ինտերնացիոնալի փոխարէն, որի համագումարներին ընդհանուր աշխատանքի համար խմբուում էին այլ և այլ երկիրների սոցիալիստական կուսակցութիւնների ներկայացուցիչները, այժմ ունինք խորտակւած Ինտերնացիոնալի ցրիւբեկորները, որոնք իրենց հերթին, բաժանուում են հակամարտ մեծամասնութեան և փոքրամասնութեան: Աւելի ուժեղ պատակտում բուրժուազիան չէր կարող երեւակայել: Բայց վերջին ժամանակներս այնուամենայնիւ սկսել են կամաց-կամաց խելքի գալ:

Անիմատ արեւահեղութեան երեք տարին բոլորելուց յետոյ պատերազմով արբեցածները գիտակցութեան են գալիս: Ժողովուրդներն սկսում են հասկանալ, թէ ինչպէս խաբւած են եղել իրենց կառավարութիւններից և թէ իրենց ինչպիսի սոսկալի հատուցում տրւեց իրենց վստահութեան համար:

Աշխատաւոր զանգւածները տեսնում են, թէ ինչի առաջ կանգնեցրեց Ինտերնացիոնալի խորտակումը, և նրանց մէջ աւելի ու աւելի զօրանում է խորտակած միութիւնը վերականգնելու ցանկութիւնը: Իէպի այդ միութիւնը տանող ճանապարհին կան շատ դժւարութիւններ, կուտակել է մեծ անվըտանութիւն և անբարեացակամութիւն: Կարեղ է նոյնիսկ պատահել, որ սկզբում չյաջողւի էլ սոցիալիստական կուտակցութիւններէ միութիւնը լիովին վերականգնել. սակայն զբան պիտի ձգտել անդադար, որովհետեւ պատերազմի անողոր դատերը, աւելի լաւ, քան որեւէ այլ բան, ցոյց տւին, որ բոլոր Աշխատաւորներէ Միջազգային Միութեան մէջ է նրանց ուժի և վերջնական յաղթանակի զբաւականք:

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ «Աշխատաւոր»-ի գրադարանի գրքոյկները

1. Ե. Բրեշկո-Բրեշկովսկայա. — Ինչպէսք է անել Հիմնագ. ժող. 5 կ.
2. Ն. Ա. Բուրակին. — Հողի սեփականութիւնը և համայնական սեփականութիւնը. 10 կող.
3. Վ. Պոքէնի. — Ինչ է սոցիալիզմը. գինն է 15 կող.
4. Ժ. Ժորէս — Սազադութեան գաղափարը. գինն է 10 կող.
5. Մեր ծրագիրը. — Հայ Յ. Դաշնակցութեան ծրագրի պարզ բացատրութիւնը) — գինն է 20 կ.
6. Կարմելիկ. — Նոր լեռան քարոզը, թարգ. Տ. Յ. — 10 կ.
7. Վիլնելմ Լիբկնիխտ. — Սարգիւր և ճանճերը գինն է 10 կ.
8. Լիբին. — Ինչ է հիւսնագիր ժողովը Ռուս. թարգ. օր. Լ. Յարութիւնեան գինն է 10 կող.
9. Վ. Խոբնի. — Երբ և ինչպէս պէտք է լինի սոցիալիստական յեղափոխութիւնը. գինն է 50 կ.

«Ազգային գրադարան»



NL0196710

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Գրվելի՝ Тифлисъ, редакция «Ашхата-
воръ», Гановская ул. № 3.